ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» 1998 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-27 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ.1» կետ.

«գ.1) ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեությունը.»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի չորրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ստեփանակերտ քաղաքում հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս սույն օրենքի 7-րդ հոդվածի «ա», «ա[1]», «ա.2», «ե», «էֆ», «ժե», «ժթ», «ժթ.1», «իգ» կետերով նախատեսված գործունեության տեսակների ու «դ» կետով նախատեսված՝ թեթև մարդատար և բեռնատար ավտոմեքենաներով գործունեությունների մասով լրացուցիչ կիրառվում է 0,5 գործակից, «գ», «թ», «ժ», «ի», «իա», «իբ» կետերով նախատեսված գործունեության տեսակների ու «դ» կետով նախատեսված՝ ավտոբուսներով և միկրոավտոբուսներով գործունեությունների մասով՝ 2020 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների համար՝ 0,7 գործակից:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասում ««ժդ[1]»» բառից առաջ լրացնել ««գ.1»,» բառը:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «Սույն օրենքով սահմանված» բառերից հետո լրացնել «ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեության ու» բառերը:

Հոդված 5. Օրենքի 33-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Սույն գլխի դրույթները, բացառությամբ 32-րդ հոդվածի և 33-րդ հոդվածի 1-ին մասի, չեն տարածվում այն հարկ վճարողների վրա, որոնք հանրային սննդի ծառայություններ են մատուցում ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.2-րդ գլխով.

«**Գ Լ ՈՒ Խ 4.2**

ԸՍՏ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ, ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԸ

Հոդված 36.6. Ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի չափը

1. Ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում հաստատագրված վճարի

ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալի 5 տոկոսի չափով՝ դրամական արտահայտությամբ:

Հոդված 36.7. Ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալը

1. Ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում ամսվա ընթացքում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտները (իրացման շրջանառությունը):»:

Հոդված 7. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետում «վերսկսելը» բառից հետո լրացնել «, ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնողների» բառերը:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**